Արձանագրություն N 2
«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման եվ գնահատման նիստից

ք. Երևան

17 փետրվարի 2023թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ) — Հ. Սեդրակյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Ա. Ավագյան

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Լ. Զաքարյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) — Մ. Մալխասյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) — Մ. Բեկչյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀմ) — Զ. Հայրապետյան

«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ
2. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
3. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին:
4. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման մասին:
5. Տվյալներ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
6. Տվյալներ՝ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված զբաղեցրած մասնակիցների որոշման վերաբերյալ:
7. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված ծառայության բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին

ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	1 860 000
2	նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	4 356 300
3	նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	2 667 000
4	նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	1 692 000

2. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

2.1 «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2.2 Սահմանված կարգով ներկայացված մասնակցների հայտերը, որենք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել է հետագա գնահատման համար ընդունելի 4-ն է:

2.3 «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N/N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ	ՀՀ ք, Երևան,0070 Նար-Դոսի փ., 75շ., բն,9	02847013	v19512014@yandex.ru Հեռ. +374 98 40 55 98
2	«ՎԻՌԱՄ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան Կոմիտասի պ./շ.35/բն.13	00232475	viramllc@gmail.com Հեռ. +374 91 21 47 05
3	«ԷՄ ՍԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Վերին Շենգավիթ 2Փ, 7/2շ. 50բն.,	02293328	mca.group@mail.ru Հեռ. +374 91 31 32 90
4	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 54բ.	01508665	ekspertizaproektov@mail.ru Հեռ. +374 93 80 00 09

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին:

3.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

3.2 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Փ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ.

- «ՎԻՌԱՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ Հավելված 2-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:
- «ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ-ի կողմից կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՎԻՌԱՄ» ՍՊԸ -ի ներկայացրած հայտը մերժել:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 16.02.2023թ-ին ընթացակարգը կասեցնել և առաջարկել՝ «ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ-ին ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

17.02.2023 թվականին, ժամը 12:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

4. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Φ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման մասին

4.1 Ընդունել ի գիտություն, որ «ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտում առկա անհամապատասխանությունը:

5. Տվյալներ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Φ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

5.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Չափաբաժին 1: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ	800 000	-	800 000
2	«ԷՄ ՍԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	1 166 666.7	233 333.3	1 400 000

Չափաբաժին 3: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ	1 000 000	-	1 000 000
2	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1 760 000	352 000	2 112 000

Չափաբաժին 4: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ	500 000	-	500 000
2	ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1 150 000	230 000	1 380 000
3	«ԷՄ ՍԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	1 166 666.7	233 333.3	1 400 000

5.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում է /ճիշտ է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:

6. Տվյալներ՝ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Φ» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման վերաբերյալ

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչվեց 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ « ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ-ն:

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ 2-րդ չափաբաժնի մասով **ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Φ** ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվեց չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

7. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Φ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

8.1 **«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/1Φ»** ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

8.3 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Հ. Սեդրակյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ա. Ավագյան**	.....
	Լ. Զաքարյան	.....
	Մ. Մալխասյան	.....
	Մ. Բեկչյան	.....
Քարտուղար՝	**Զ. Հայրապետյան**	.....